ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

8 մարտի ուրբաթ 2024
տպագրության ԺԳ տարի

32
(2882)

100 դրամ

քաղաք. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

Ա. ՍԻՄՈՆՅԱՆԻ ՀԱՄԱՐ ԼԻՏՎԱՅԻ ԳՈՐԾԸՆԿԵՐԸ ԺԱՄԱՆԱԿ ՉՈՒՆԻ

ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանի՝ Վիլնյուս նախապես պլանավորված այցը չեղարկվել է. Լիտվայի ԱԺ նախագահը ժամանակ չունի Ալեն Սիմոնյանին ընդունելու: Այսպիսով, Հայաստանի Հանրապետության ԱԺ կայքից «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ Ալեն Սիմոնյանը բավականին մեծ շքախմբով մարտի 3-ից 6-ը պաշտոնական այցով մեկնել է Լիտվայի մայրաքաղաք Վիլնյուս, այնուհետեւ՝ 7-ից 8-ը, մեկնելու է Տալլին: Պատվիրակության կազմում էին Արսեն Թորոսյանը, Արման Եղոյանը, Արուսյակ Ջուլհակյանը եւ ԱԺ մի խումբ աշխատակիցներ, սակայն ոչ մի ընդդիմադիր պատգամավոր: Մարտի 3-ից անցել է արդեն 4 օր, սակայն ՀՀ ԱԺ պաշտոնական կայքը լռում է Վիլնյուսի պաշտոնական այցի լուրի մասին: Ավելին՝ ՀՀ ԱԺ նախագահը երեկ ֆեյսբուքյան իր էջում լուսանկար էր հրապարակել Տալլինից, ինչը ուղիղ փաստում է, որ ԱԺ նախագահի պատվիրակությունը միանգամից մեկնել է Տալլին: Այն, որ Ալեն Սիմոնյանը Վիլնյուս չի մեկնել, վկայում է նաեւ նրա կողմից ստորագրված հաջորդ կարգադրությունը, որով ՀՀ ԱԺ նախագահի պարտականությունները մարտի 5-ից 7-ը դրվում է Հակոբ Արշակյանի վրա: Ավելի ուշ ԱԺ-ն հավելումներ է արել ԱԺ նախագահի գործուղման մասին համապատասխան կարգադրության մեջ՝ հավելվածի վերջում ավելացնելով, որ կարգադրության տեքստից հանում է Վիլնյուս բառը, բայց ծախսերի վերադարձի մասին ոչինչ չկար փաստաթղթերում: «Ժողովուրդ» օրաթերթը պարզաբանումների համար զանգահարեց ԱԺ նախագահի մամուլի խոսնակին, սակայն հեռախոսազանգին պատասխանեց ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանն անձամբ: ԱԺ նախագահը հաստատեց, որ Վիլնյուս այցը չի կայացել, հետաձգվել է: «Երկկողմ համաձայնությամբ է այցը չեղարկվել: Իրենք ընտրությունների են պատրաստվում, նախընտրական թոհուբոհի օրերի հետ կապված՝ անհամաձայնություն կար, ես էլ վատառողջ էի, չէի կարող գնալ»,- պարզաբանեց Ալեն Սիմոնյանը: Հարցին՝ եթե այցը հետաձգվել է, կա՞ արդյոք պայմանավորվածություն, թե որքան ժամանակ է այն հետաձգվել, երբ այն պետք է կայանա: «Ապրիլի 2-րդ կեսին համաձայնություն կա, երեւի 19-ի կողմերը, որ հետաձգված հանդիպումը տեղի կունենա. դեռ չենք հաստատել, քննարկում ենք սա»,- մանրամասնեց ԱԺ նախագահը: Այսպիսով, արձանագրենք, որ Ալեն Սիմոնյանի համար իր պաշտոնակիցը՝ Լիտվայի Սեյմի խոսնակ Վիկտորիա Խմելիտե Նիելսենը, ժամանակ չունի: Հետաքրքիր է՝ ԱԺ նախագահի այցը կազմակերպողները չգիտեին արդյոք, որ Լիտվայում ընտրություններ են սպասվում այցի օրերին:



«Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությունը սկսել է չարաշահել խնամի-ծանոթ-բարեկամ թեորեմը եւ սեփական բարեկամներին աշխատանքի տեղավորելուց հետո անցել է հեղափոխության ընթացքում ակտիվություն ցուցաբերած «հպարտ քաղաքացիներին»: Եթե Երեւան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի ՔՊ-ական փոխթաղապետ Սերոբ Սարգսյանը 2018 թվականին Նիկոլ Փաշինյանի վիրակապին չհետեւեր, ապա դեռ կշարունակեր առ այսօր աշխատել Vivaro բուքմեյքերական գրասենյակում: Վերջինս կրկնում է դասական ՔՊ-ականների գերակշիռ մեծամասնության հետհեղափոխական կյանքի ուղին, ինչպես Հայկ Կոնջորյանի կնոջ դեպքում է: Կոնջորյանը կնոջը տեղավորել էր «ՀայՓոստ»-ում, ապա աստիճանաբար սկսել էր նրա հաստիքը բարձրանալ, դրան զուգահեռ, կրկնապատկվում էր կնոջ տարեկան ֆինանսական եկամուտը: Սերոբ Սարգսյանի դեպքում կարիերայի աճը գրանցվել է այլ կերպ: Նա նախ Արաբկիրի թաղապետարանում տեղավորեց կնոջը, ապա ինքը սկսեց «շրջագայել» պետական աշխատավայրերում՝ Աջափնյակի թաղապետարան, «ՀՀԳ» ՓԲԸ, Շրջակա միջավայրի նախարարություն, կրկին Աջափնյակի թաղապետարան, այժմ էլ՝ «ՀայՓոստ» ՓԲԸ, որը թեեւ ամեն ամիս որպես անպարտաճանաչ հարկատու ՊԵԿ-ի կողմից տուգանվում է ՀԴՄ խախտման համար, սակայն պարտաճանաչ վճարում է ՔՊ-ականների եւ նրանց կանանց աստղաբաշխական աշխատավարձերը: Հավելենք նաեւ, որ սա այն նույն փոխթաղապետն է, որը 2022 թվականի ապրիլի 30-ին Երեւանի Նալբանդյան փողոցում Ցորի զորամասի անհետ կորած զինծառայողների ծնողներին անվանել էր «փնթիներ»:

Նիկոլ Փաշինյանի հրաժարականի պահանջով ձեւավորված «Միասին» այլընտրանքային հասարակական շարժման ներսում արշալույսներն այնքան էլ հանդարտ չեն. շարժման անդամները տարաձայնություններ ունեն իրար հետ: Դեռ նախորդ տարի ընդդիմադիր մի շարք հասարակական ու քաղաքական գործիչներ ձեւավորեցին «Միասին» շարժում ու խոստացան ամեն ինչ անել՝ Փաշինյանի հրաժարականին հասնելու եւ Արցախի հարցը կրկին օրակարգ բերելու համար: Շարժումը պարբերաբար ակցիաներ էր իրականացնում՝ իրենց ձեւակերպմամբ՝ «աթոռներից հեռացնելու օրվա ձախորդ կառավարությանը»: Բայց, արի ու տես, «շաբաթն ուրբաթից շուտ եկավ», ու ոչ միայն Փաշինյանին հեռացնել չստացվեց, այլ շարժումն է կարծես փլուզման գնում: Այսպիսով, «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ շ արժման անդամները տարաձայնություններ ունեն մի շարք հարցերի շուրջ: Խոսքը, մասնավորապես, հասարակական-քաղաքական գործիչ Էդգար Ղազարյանի եւ ՍԴԿ նախագահ Արամ Սարգսյանի մասին է, որոնք, ըստ մեզ հասած տեղեկությունների, լուրջ տարաձայնություն են ունեցել՝ շարժման օրակարգի ու բովանդակության հետ կապված: Բանն այն է, որ Էդգար Ղազարյանը Սարգսյանին ասել է, որ նմանատիպ ակցիաներն ու նույնաբովանդակ ելույթներն անիմաստ են, միայն մսխում են հանրային ռեսուրսը, ու պետք է նոր քայլեր ձեռնարկել: Արամ Սարգսյանը, սակայն, համաձայն չի եղել նրա հետ, ինչից հետո, կարելի է ասել, շարժման անդամների ճանապարհները բաժանվել են: «Ժողովուրդ» օրաթերթը նկատեց նաեւ, որ Էդգար Ղազարյանը, որը վարում էր «Միասին» շարժման՝ փետրվարի 20-ին տեղի ունեցած ակցիան, շարժման հաջորդ ակցիաներին ներկա չէր: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկությունը ճշտելու համար կապ հաստատեց Էդգար Ղազարյանի հետ՝ պարզելու՝ ինչ տարաձայնություններ են ունեցել Արամ Սարգսյանի հետ, ու ինչու չի մասնակցում շարժման ակցիաներին: Վերջինս չցանկացավ փակագծեր բացել, միայն նշեց. «Շարժման ակցիաներին կրկին կմիանամ միայն այն ժամանակ, երբ դրա օրակարգի ու բովանդակության հետ կապված հստակեցումներ լինեն»:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ նախկին ՊՆ նախարար Արշակ Կարապետյանի կողմից երեկ ազդարարված Համահայկական ճակատ կուսակցության նախագահը կլինի Հովհաննես Շահինյանը (տես կուսակցություն ընդունվելու դիմումի ձեւը ArmLur.am կայքում): Թե ինչու է ընդդիմադիր գեներալի ընտրությունը կանգնել Արաբկիրի նախկին թաղապետի վրա, «Ժողովուրդ» օրաթերթը կփորձի պարզել առաջիկայում: Հիշեցնենք, որ Հովհաննես Շահինյանի նկատմամբ 2023 թվականի ապրիլին նախաձեռնվել էր հետապնդման վարույթ: Շահինյանի փաստաբանը նշել էր, որ իրենք անգամ չգիտեն, թե քրեական օրենսգրքի որ հոդվածի շրջանակներում է իրականացվում քրեական վարույթը: Վերջինս եկել էր այն համոզման, որ նախաձեռնվածը քաղաքական հետապնդում է:

ԶՐՈՒՅՑ

ԹՈՒՐՔԱԿԱՆ ԶՈՐՔԵՐԸ՝ ԱՐԱՐԱՏՅԱՆ ԴԱՇՏՈՒՄ

Գյումրեցի ընդդիմադիր գործիչ, իրավաբաշտպան Կարապետ Պողոսյանն ArmLur.am-ի հետ զրույցում հայտարարել է՝ Թուրքիան հայ-թուրքական սահմանի Զանֆիդայի հատվածում հրետանի ու ականանետ է տեղադրել:

Ըստ նրա՝ հարձակողական տեսակի այս զենքերը գյուղացիներն իրենց աչքով են տեսել:

-Պարոն Պողոսյան, կխնդրեմ անդրադառնաք Ձեր ֆեյսբուքյան մի ուշագրավ գրառմանը. Դուք հայտարարել եք, որ Թուրքիան հայ-թուրքական սահմանի Զանֆիդայի հատվածում հետանի է տեղադրել: Կխնդրեմ մանրամասներ ներկայացնել՝ Ձեզ որտեղից այդ տեղեկությունը:

-Մինչ Հայաստանի, այսպես ասած, դիվանագետները՝ Միրզոյան Արարատի, Ռուբեն Ռուբինյանի գլխավորությամբ, Անթալիայում ծովն էին վայելում եւ սուտ տեղեկություններ էին տարածում, թե ամեն ինչ լավ է, այդ ընթացքում, այո՛, Զանֆիդայիի հատվածում՝ դեպի Մարգարա, տեղադրվել են անվավոր հրետանիներ եւ 120 տրամաչափի ականանետեր, ինչը լուրջ մտորումների տեղիք է տալիս, որովհետեւ սրանք հարձակողական զենքեր են, սրանք սահմանապահների զենքեր չեն: Իրենք շատ մոտ են տեղադրված, եւ նաեւ գյուղացիներն են կարողացել տեսնել, այն գյուղացիները, որոնք նեյտրալ հատվածում հող են մշակում: Սա իսկապես շատ մտահոգիչ է: Տեսեք, սահմանապահի գործառույթների մեջ մտնում է խախտումները վերացնելը կամ ձերբակալելը, եւ իրենց ընդամենը պետք է ավտոմատ, մի քանի տեսախցիկ. դա այլ գործողություններ է ենթադրում: Ականանետով երբեք սահմանախախտ չեն բռնելու, ականանետը ներխուժելու համար է: Սրանք ինչ են պայմանավորվել՝ դժվար է ասել, բայց այն ֆոնին, երբ այստեղ փորձում են ռուս սահմանապահներին հեռացնել «Զվարթնոց» օդանավակայանից, երբ այստեղ հակառուսական տարատեսակ պրոպագանդա է գնում, այսինքն՝ այդ պրոպագանդան նաեւ անցել է որոշակի գործողությունների, Թուրքիան արդեն հարձակողական զենքեր է տեղադրում: Սա դեռեւս մոտիկ հատվածն է, որը կարելի է ոչ պրոֆեսիոնալ հեռադիտակով էլ տեսնել, իսկ ավելի հեռվում ինչ է տեղադրված, ինչ է կատարվում, ես, ցավոք սրտի, չունեմ հնարավորությունը տեսնելու, բայց վստահ եմ, որ այս իշխանությունները ունակ են սեփական լափամանը պահելու համար գնալ այնպիսի մի սադրանքների, որը կբերի նաեւ հայ-թուրքական բախման, գուցե ռուս-թուրքական բախման:

-Պարոն Պողոսյան, բայց այս ամենը իսկապե՞ս հարձակման նպատակով է, ըստ Ձեզ, արվում, թե՞ հանրության մոտ խուճապ առաջացնելու:

-Իրենք երբ որ տեղադրել են այդ հրետանային զենքերը, իրենք դրա մասին չեն հայտարարել, հետեւաբար այստեղ խուճապի խնդիր չկա. սա խոսում է ինչ-որ բան նախապատրաստելու մասին: Ձեզ կխնդրեմ՝ փորձեք Դուք նաեւ հարցադրումներ անել մեր ԱԱԾ-ին, ռուս սահմանապահներին, թող իրենք տան որոշակի պարզաբանում: Ես վստահ եմ՝ իրենք չեն կարողանա այս փաստը հերքել՝ ո՛չ ռուս սահմանապահները, ո՛չ մեր ԱԱԾ-ն. իրենք երկուսն էլ պարտավոր են մեզ ներկայացնել որոշակի պարզաբանում:

-Այսինքն՝ կարծում եք՝ սա նաեւ փոխկապակցվա՞ծ է վերջին շրջանում հայ-ռուսական հարաբերությունների հետ, այսինքն՝ սա հակաքա՞յլ է:

-Թուրքիայի սահմանադրության մեջ կա հստակ կետ, որ հարեւան երկրներից որեւէ մեկում եթե լինում են ներքին որոշակի խժդժություններ կամ անկայունություններ, ինքը իր սահմանադրությամբ իրավունք ունի զորք մտցնել այդ երկրի տարածք, որպեսզի իր երկրի անվտանգությունը ապահովի, այսինքն՝ այսօր Փաշինյանը, ամենայն հավանականությամբ, իր թուրք տերերին խոստացել է այստեղ որոշակի անկայունություն ստեղծել, որպեսզի ռուսական զորախումբը կարողանա հանել, եւ արդյունքում հավանական է, որ Արարատյան դաշտ կմտնեն թուրքական զորքերը, որոնք խելոք այնտեղ կնստեն եւ կասեն, որ եկել են իրենց երկրի անվտանգությունը ապահովելու:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ՊԵՏՔ Է ՄՏԱՀՈԳՎԻ

«ԲՈԼՈՐԸ ՊՈՒՊՈՒՇԻԿ ԻՐԵՆ ՍԻՐՈ՞ՒՄ ԵՆ»

Նախօրեին՝ ԱԺ-ում ՔՊ խմբակցության պատգամավորների հետ հանդիպումից հետո, լրագրողների հետ զրույցում ԱԽ քարտուղար Արմեն Գրիգորյանը ասել է, որ Արեւմուտքի կողմից ոչ մի պարտադրանք չկա, եւ Ռուսաստանի հետ հարաբերությունները Հայաստանի կողմից ոչ ոք չի փչացրել:

«Մեզ հաճախ մեղադրում են, որ մեր պատճառով է Հայաստան-Ռուսաստանի հարաբերությունները փչացել, բայց եկեք ավելի մեծ պատկերի մեջ դնենք ու փորձենք հասկանալ՝ արդյոք Ռուսաստանն իր հարաբերությունները այլ երկրների հետ էլ է փչացրել: Եթե նայենք, կտեսնենք, որ բազմաթիվ Հայաստանի նման օրինակներ կան, միայն Հայաստանը չէ: Ռուսաստանը միայն մեզ չի վատ վերաբերվում»,- ասել է ԱԽ քարտուղարը:

ArmLur.am-ը զրուցեց քաղաքագետ Թեւան Պողոսյանի հետ, որը մեզ հետ զրույցում ասաց, որ Ռուսաստանը ինքն է փչացրել հարաբերությունները, ինքն էլ երեւի ելք գտնելու է, եւ այլ հարց է, երբ Հայաստանը իր հարաբերությունները փչացնելու դեպքում կարողանալու է արդյոք հարցը լուծել, թե ոչ:

«Ամեն երկիր իր համար է պատասխան տալու: Ամերիկան իր համար է պատասխան տալիս. կուզի՝ կփչացնի, այսօր այդ կարողությունը ունի: Ուզում եմ ասել՝ հիմա Ամերիկան, եթե որոշում է կայացնում, բոլորը պուպուշիկ իրեն սիրո՞ւմ են: Թուրքիան բոլոր 4 կողմի հարեւանների հետ հարաբերությունները փչացրել է, ճի՞շտ է, բոլորի վրա հարձակվում է, իրենք էին ասում՝ 0 խնդիր, բայց չկա հարեւան, որի հետ խնդիր չունենա. մե՞նք ենք Թուրքիա գնում»,- ասաց Պողոսյանը:

Պողոսյանի խոսքով՝ ԱԽ քարտուղարը գեղեցիկ ձեւակերպում է տվել, առանց բովանդակայինը իմանալու:

«Ես շատ ուրախ կլինեի, որ այդ նույն կետում լրագրողները ասեին՝ ի՞նչ կապ ունի այսօր Ռուսաստանը, ում հետ հարաբերությունները ոնց են փչացել: Հայաստանը իր հարաբերությունները, որ փչացնում է, հետեւանքները Հայաստանինն է լինելու: Ռուսաստանի փչացրած հետեւանքները իրենն է»,- ասաց քաղաքագետը:

Քաղաքագետի խոսքով՝ Հայաստանը պետք է մտահոգվի միայն իր սեփական հարաբերություններով բոլորի հետ:

«Հիմա, որ Ադրբեջանի հետ հարաբերությունները այնպիսին են, որ ինչ Ադրբեջանն ասի, Հայաստանի իշխանություններն այսօրվա գործով տեղում կատարում են, պատմությունը պատմության հետեւից է բերում են»,- ասաց քաղաքագետը:

ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆ

ՃԱՆԱՉՎԵԼ ԵՆ ԱՆՑԱՆԿԱԼԻ

Ռուսաստանի Դաշնությունում ամերիկյան դիվանագիտական առաքելության ղեկավար Լին Թրեյսին մարտի 7-ին կանչվել է Ռուսաստանի Դաշնության ԱԳՆ, նրան ծանուցել են, որ ԱՄՆ երեք հասարակական կազմակերպություններ ճանաչվել են անցանկալի:

«Դեսպանին տրվել է պաշտոնական նոտա՝ պահանջելով դադարեցնել ցանկացած օգնություն այս ՀԿ-ների գործունեությանը»,- ասվում է Ռուսաստանի Դաշնության ԱԳՆ-ում:

Քննարկվող կազմակերպություններն են «Միջազգային կրթության ամերիկյան խորհուրդը», «Մշակութային հեռանկարները» եւ «Միջազգային կրթության ինստիտուտը»:

Նախարարությունը նշել է, որ բոլոր երեք ՀԿ-ները ԱՄՆ դեսպանատան աջակցությամբ իրականացնում են «հակառուսական ծրագրեր եւ նախագծեր», ինչպես նաեւ հավաքագրում են «գործակալներ»:

Ռուսաստանի Դաշնության ԱԳՆ-ն ընդգծել է, որ երկրի ներքին գործերին միջամտելու փորձերը կոշտ կերպով կճնշվեն, այդ թվում՝ ԱՄՆ դեսպանատան աշխատակիցների արտաքսման եղանակով:

Ավելի վաղ Ռուսաստանի Դաշնության ԱԳՆ պաշտոնական ներկայացուցիչ Մարիա Զախարովան դիմել էր Մոսկվայում ԱՄՆ դեսպան Լին Թրեյսիին՝ կոչ անելով դադարեցնել ստել ռուս ժողովրդի հետ ԱՄՆ-ի մարդասիրական կապերի զարգացման կարեւորության մասին: Զախարովայի խոսքով՝ Մոսկվայում արեւմտյան դեսպանները միջամտում են Ռուսաստանի ներքին գործերին:

ԾԱՆՈՒՑՎԵԼ Է

«Ռուսական կողմը տեղեկացվել է «Զվարթնոց» օդանավակայանից ռուսական սահմանապահների դուրսբերման հայկական նախաձեռնության մասին»,- Հայաստանի եւ Կիպրոսի ԱԳ նախարարների մամուլի ասուլիսի ժամանակ ասաց Հայաստանի Հանրապետության ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը:

«Ի սկզբանե ռուսական սահմանապահների մասնակցությունը մի շարք կետերում, այդ թվում՝ «Զվարթնոց» օդանավակայանում, մտածված է եղել՝ իբրեւ աջակցություն նորանկախ հայկական պետականությանը: Նախատեսված է այս գործառույթը իրականացնել այնքան ժամանակ, քանի դեռ Հայաստանը դրա կարիքը կունենա, եւ երբ Հայաստանը կունենա իր ինստիտուցիոնալ հնարավորությունները, այդ գործառույթը ամբողջությամբ կիրականացնի Հայաստանը իր պատկան մարմինների միջոցով: Եվ, ահա, հիմա մենք կարծում ենք, որ Հայաստանի Հանրապետությունն ինստիտուցիոնալ առումով ի զորու է «Զվարթնոց» օդանավակայանում միայնակ իրականացնել սահմանապահ ծառայությունը, եւ ծանուցել ենք ռուսական կողմին այս մասին: Ենթադրում եմ, որ սա բավարար կլինի ռուսական կողմի համար, եւ հարցը այդքանով կլուծվի»,- նշեց Միրզոյանը:

ՉՁԵԿՈՒՑՎՈՂ ՀԱՐՑԵՐ

Երեկ կայացավ Կառավարության մարտ ամսվա առաջին նիստը: Նիստի օրակարգում կրկին մի շարք չզեկուցվող հարցեր էին ընդգրկված:

ArmLur.am-ը նկատեց, որ օրակարգի չզեկուցվող հարցերից մեկը էկոնոմիկայի նախարարության նորանշանակ նախարար Գեւորգ Պապոյանինն է: Օրակարգում առկա 34 չզեկուցվող զեկույցից 5-ը Գեւորգ Պապոյանինն էր:

Նորանշանակ նախարարի զեկույցներից 2-ը ՀՀ կառավարության մի շարք որոշումներում փոփոխություններ կատարելու մասին էին: Մյուս երեք զեկույցները Գերակա ոլորտում իրականացվող ներդրումային ծրագրի շրջանակներում ներմուծվող տեխնոլոգիական սարքավորումների, դրանց բաղկացուցիչ ու համալրող մասերի, հումքի եւ (կամ) նյութերի նկատմամբ սակագնային, մասնավորապես՝ ներմուծման մաքսատուրքից ազատելու արտոնությունից օգտվելու համար «ԳԻՆԱՓ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ներկայացված հայտը բավարարելու եւ արտոնությունը կիրառելու մասին էին, Կլինիկական փորձարկումների, կենսահամարժեքության հետազոտությունների փոխհատուցման ծրագիրը հաստատելու եւ «Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեի մասին» օրենքում վերաբաշխում կատարելու մասին:

Վերջին կետով սահմանվում է Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեով նախատեսված ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից ՀՀ էկոնոմիկայի նախարարությանը հատկացնել 29.8 մլն դրամ կոնյակի սպիրտի իրացման աջակցության ծրագիր միջոցառման շրջանակներում առաջացած պարտավորությունների կատարման նպատակով, քանի որ 2024 թվականի հունվար ամսին, միջոցառման 4 շահառուների կողմից ներկայացված դիմումների համաձայն, 2023 թվականի դեկտեմբեր ամսվա ընթացքում իրացված կոնյակի սպիրտի համար տրամադրվելիք աջակցությունը կազմում է 79.8 մլն դրամ, սակայն ՀՀ 2024 թվականի պետական բյուջեով միջոցառման համար նախատեսվել է 50.0 մլն դրամ:

Զեկույցի ամփոփաթերթում ներառված է հետեւյալ կետը՝ ի պատասխան բոլոր հարցերի.

«Բյուջետային տարվա սկզբին Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդի միջոցների հաշվին գումարի հատկացումը համարում ենք ռիսկային, առաջարկում ենք զերծ մնալ ՀՀ կառավարության պահուստային ֆոնդը որպես ֆինանսավորման աղբյուր դիտարկելուց եւ նախագծով պահանջվող գումարի ֆինանսավորումը դիտարկել նախարարությանը հատկացված միջոցներից վերաբաշխումների ճանապարհով՝ առաջնահերթությունների վերանայման համատեքստում»:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՐՈՒՍՏ

ՇՏԱՊՈՒՄ Է ԱԴՐԲԵՋԱՆԸ

Արցախի Հանրապետության Պատմական միջավայրի պահպանության պետական ծառայությունն ահազանգում է, որ թշնամի Ադրբեջանը ֆանդում են ոչ միայն գերեզմանոցները, այլեւ այդ գերեզմանոցների մասին ցանկացած վկայություն:

ArmLur.am-ը զրուցել է Արցախի ԱԺ պատգամավոր Մետաքսե Հակոբյանի հետ՝ հասկանալու համար, թե ինչու է Ադրբեջանը ոչնչացնում գերեզմանները ու դրանց մասին վկայությունները:

Հակոբյանի խոսքով՝ Ադրբեջանը իր հստակ, ծրագրավորված քաղաքականությունն է վարում, որը որեւէ կերպ այս տարիների ընթացքում չի փոխվել, եւ ավելին՝ 30 տարի շարունակ իրենք ձգտել են դա անել, բայց այդ 30 տարիների ընթացքում դրա հնարավորությունը չունենալով՝ հիմա բացառիկ հնարավորություն ունեն դա անելու:

«Նպատակը պարզ, հասկանալի ու մեկն է՝ շտապում է Ադրբեջանը, որովհետեւ հասկանում է, որ եթե հիմա փառքի ուժով ինքը Արցախում է եւ, ըստ էության, ոչ թե գրավել է, այլ օկուպացրել է Արցախը, այս անգամ՝ արդեն առանց հայերի՝ ամեն ինչ անելով, որ բռնի տեղահանումը արդեն տեղի ունենա այնպես, ինչպես իրենք ծրագրել էին, եւ, ցավոք, իրենք կարողացան անել: Հիմա արդեն հասկանում են, որ, ամեն դեպքում, իրավունքի ուժով ամեն ինչ ավարտված չէ»,- ասաց Հակոբյանը:

Մետաքսե Հակոբյանը խոսքում նաեւ նշեց, որ իշխանությունները հավերժ չեն, եւ կգա ժամանակ, որ կլինեն հաստատ ազգային ուժեր, եւ այդ ժամանակ պայքարը այլ ընթացք է ստանալու: Քանի որ այսօր զրկված ենք միջազգային ատյաններում ներկայանալուց՝ կապված մեր մշակութային ժառանգության վերացման եւ գերեզմանների քանդման վանդալիզմի հետ, Ադրբեջանը կարճ ժամանակում փորձում է վերացնել ամենը:

«Հետեւաբար իրենք ժամանակի խնդիր ունեն եւ արագ պետք է այդ ընթացքում քանդեն. իրենց խանգարող չկա, այդ մասին աղմուկ աղաղակ հանող չկա պատկան մարմիններից: Ուստի, իրենք անում են, որպեսզի ժամանակին այն իշխանությունները, որոնք կփորձեն կամ այդ հարցը կբարձրացնեն, այլեւս կամ շատ քիչ հնարավորություն կլինի կամ ընդհանրապես չի լինի: Դրանով պայմանավորված՝ նրանք շտապում են եւ անում են՝ հայկականության հետքը վերացնելով, որովհետեւ ամեն դեպքում դա շատ դժվար է անելը, որովհետեւ Արցախն ինքը դարեր շարունակ հայկական է եղել եւ երբեւէ չի հայաթափվել»,- ասաց Հակոբյանը:

Պատգամավորը հավելում է, որ այդ հնարավորությունը իրենց հիմա տրվել է, եւ այս պահին այդ խաչքարերը, գերեզմաններն ու դրանց մասին վկայությունները միակ ապացույցներն են, որ կան Արցախի հայկականության վերաբերյալ:

«Այս պահին աշխարհը շատ լավ հասկանում է, եւ ինչը որ անում է Ադրբեջանը, մարտահրավեր է աշխարհին, որովհետեւ, ամեն դեպքում, հավաքական Արեւմուտքը հիմնված է համամարդկային արժեքների, ժողովրդավարության վրա, եւ իրենց հիմքերը խարխլվում են նաեւ սրանով»,- ասաց պատգամավորը՝ ավարտելով զրույցը:

ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

«ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԴՊՐՈՑ»

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության հիմնադրած «Ժողովրդավարության դպրոց»-ն արդեն 4 օր է՝ գործում է:

ArmLur.am-ին կուսակցության փոխնախագահ Վահագն Ալեքսանյանը փոխանցեց, որ դպրոցում սովորելու 140-ից ավելի հայտ են ստացել:

Նրանց մի մասը ՔՊ երիտասարդական կառույցի անդամներն են, մյուս մասը՝ դպրոցում սովորելու հայտ ներկայացրած ուսանողներ:

«Ժողովրդավարության դպրոց»-ում դասավանդելու են վարչապետ Նիկոլ Փաշինյանը, Ազգային ժողովի ՔՊ խմբակցության ղեկավար Հայկ Կոնջորյանը, Ազգային ժողովի պատգամավորներ Մարիա Կարապետյանը, Լիլիթ Մինասյանը, Ազգային ժողովի փոխնախագահ Ռուբեն Ռուբինյանը, վարչապետի աշխատակազմի ղեկավար Արայիկ Հարությունյանը եւ ԱԽ քարտուղար Արմեն Գրիգորյանը:

Նիկոլ Փաշինյանը դպրոցում դասավանդելու է Հայաստանի Հանրապետության սոցիալ-հոգեբանություն:

ՔՊ դպրոցում ուսուցանելու են քաղաքականության տեսությանն առնչվող տարբեր հարցեր, ինչպես նաեւ կոնկրետ կուսակցության ծրագրին ու գաղափարախոսությանն առնչվող հարցեր:

ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԸ ԿՀՐԱՎԻՐԻ

Երեւանի ավագանին մարտի 12-ին հերթական նիստը կհրավիրի:

ArmLur.am-ը տեղեկացավ, որ նախնական նիստի օրակարգում 21 հարց է ընդգրկված, որոնք բոլորը չզեկուցվող են:

Այսպիսով, ավագանու նիստի օրակարգում է «Ջրային կառույցներ» փակ բաժնետիրական ընկերության լուծարման հարցը:

Նշենք, որ կառույցը քաղաքապետարանի ենթակայության տակ է գտնվում:

Ըստ քաղաքապետարանի կայքում հրապարակված որոշման նախագծի՝ ավագանու այս որոշումը պայմանավորված է քաղաքային գույքի արդյունավետ կառավարմամբ եւ սպասարկմամբ, աշխատակիցների թվաքանակի օպտիմալացմամբ:

Նախատեսվում է ընկերության աշխատակիցների տեղաբաշխումը «Կանաչապատում եւ շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի ենթակայության տակ, ինչը կստեղծի հնարավորություն աշխատանքների արդյունավետ իրականացման համար:

Ավագանու նիստի օրակարգում է նաեւ Երեւանի զարգացման 2023 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության մասին եւ Երեւան քաղաքի 2023 թվականի բյուջեի կատարման հաշվետվությունը հաստատելու մասին հարցերը:

ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆ

ՔՐԵԱԿԱՆ

ՀԱՓՇՏԱԿՈՒԹՅՈՒՆ՝ ՔՆՆԻՉՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ

ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ Էդգար Նորայրի Մովսիսյանը 2022 թվականի հուլիսի 04-ից մինչեւ 2023 թվականի հունիսի 09-ն ընկած ժամանակահատվածում նախ զբաղեցրել է ՀՀ ֆինչական կոմիտեի Երեւան քաղաքի ֆինչական վարչության Արաբկիր վարչական շրջանի ֆինչական բաժնի ֆինիչի պաշտոնակատարի, այնուհետեւ նույն բաժնի ֆինիչի պաշտոնը եւ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով վերապահված լիազորությունների սահմաններում օժտված է եղել նախաքննություն իրականացնելու իրավասությամբ:

ՀՀ ոստիկանության ԵՔՎ Արաբկիրի բաժնից ՀՀ ՔԿ ԵՔՔՎ Արաբկիրի քննչական բաժին է ուղարկվել Արմենուհի Փանոսյանի՝ Երեւան քաղաքի Արողության փողոցի 3-րդ նրբանցք 17-րդ հասցեում շաբգանակագույն-դարչնագույն թութունանման զանգվածով ծանրոց հայտնաբերելու վերաբերյալ ահազանգի հիման վրա կազմված զեկուցագիրը եւ կից փաստաթղթերը:

Նշված զեկուցագիրը եւ կից փաստաթղթերը իրավասու վերադասի կողմից մակագրվել է Էդգար Մովսիսյանին:

Արդյունքում 2022 թվականի օգոստոսի 28-ին Էդգար Մովսիսյանը ՀՀ քրեական օրենսգրքի 393-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախաձեռնել է թիվ 14801122 քրեական վարույթը եւ ձեռնամուխ եղել նախաքննության կատարմանը:

Նույն օրը Էդգար Մովսիսյանի կողմից Երեւան քաղաքի Արողության փողոց 3-րդ նրբանցք 17-րդ հասցեի դիմացի հատվածում կատարվել է դեպքի վայրի զննություն, որի ընթացքում հայտնաբերվել եւ վերցվել է 290 գրամ քաշով դարչնագույն զանգված, որը թիվ 14801122 քրեական վարույթի նախաքննության ընթացքում նշանակված դատանյութագիտական փորձաքննության 1169-22 եզրակացության համաձայն՝ հանդիսացել է 259,54 գրամ հաստատուն քաշով բուսական զանգված եւ իր վրա կրել է MDMB(N)-022 կրճատ անվանմամբ թմրամիջոց: Փորձագետի հիշյալ եզրակացությունը եւ թմրամիջոցը պարունակող, կնիքված փաթեթը 2022 թվականի հոկտեմբերի 28-ին ստացվել է ՀՀ ՔԿ ԵՔՔՎ Արաբկիրի քննչական բաժնում եւ հանձնվել Էդգար Մովսիսյանին:

Էդգար Մովսիսյանը 2022 թվականի հոկտեմբերի 28-ից մինչեւ 2023 թվականի մայիսի 31-ն ներառյալ ընկած ժամանակահատվածում, ծառայողական լիազորություններն իրականացնելու հանգամանքով պայմանավորված, փաստացի իրեն հանձնված MDMB(N)-022 կրճատ անվանմամբ, թմրամիջոց պարունակող 259.54 գրամ հաստատուն քաշով բուսական զանգվածից հափշտակել է 132.6 գրամը եւ այն ծխելու եղանակով օգտագործել:

Բացի այդ, Էդգար Մովսիսյանը, զբաղեցնելով ՀՀ քննչական կոմիտեի Երեւան քաղաքի քննչական վարչության Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժնի քնիչի պաշտոնակատարի, այնուհետեւ նաեւ նույն բաժնի քնիչի պաշտոնը եւ հանդիսանալով պաշտոնատար անձ, 2022 թվականի օգոստոսի 22-ից մինչեւ 2023 թվականի մայիսի 31-ը ներառյալ ժամանակահատվածում, ծառայողական լիազորություններն օգտագործելով, հափշտակել է իրեն վստահված թմրամիջոցը:

Այսպես, Էդգար Մովսիսյանը 2022 թվականի հուլիսի 04-ից մինչեւ 2023 թվականի հունիսի 09-ն ընկած ժամանակահատվածում նախ զբաղեցրել է ՀՀ քննչական կոմիտեի Երեւան քաղաքի քննչական վարչության Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժնի քնիչի պաշտոնակատարի, այնուհետեւ՝ նույն բաժնի քնիչի պաշտոնը եւ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով վերապահված լիազորությունների սահմաններում օժտված է եղել նախաքննություն իրականացնելու իրավասությամբ:

2022 թվականի հուլիսի 13-ին ՀՀ ոստիկանության ԵՔՎ Արաբկիրի բաժնի օպերլիազոր Գ. Մելքոնյանի կողմից կատարվել է քաղաքացի Վահագն Խաչատրյանի անձնական խուզարկություն, որի ընթացքում վերջինիս մոտից հայտնաբերվել է յուրահատուկ հոտով, 2.34 գրամ քաշով դեղնականաչավուն զանգվածով թղթյա փաթեթ: Նշվածի վերաբերյալ ՀՀ ոստիկանության ԵՔՎ Արաբկիրի բաժնի օպերլիազորի կողմից կազմված զեկուցագիրը՝ կից փաթեթներով, ուղարկվել է ՀՀ ՔԿ ԵՔՔՎ Արաբկիրի քննչական բաժին, որը իրավասու վերադասի կողմից մակագրվել է Էդգար Մովսիսյանին:

2022 թվականի հուլիսի 13-ին Էդգար Մովսիսյանը ՀՀ քրեական օրենսգրքի 393-րդ հոդվածի 1-ին մասով եւ 396-րդ հոդվածի 1-ին մասով նախաձեռնել է թիվ 14117222 քրեական վարույթը եւ ձեռնամուխ եղել նախաքննության կատարմանը:

Վահագն Խաչատրյանի մոտից հայտնաբերված զանգվածի վերաբերյալ թիվ 14117222 քրեական վարույթի նախաքննության ընթացքում նշանակված դատանյութագիտական փորձաքննության թիվ 929ք-22 եզրակացության համաձայն՝ փորձաքննության ներկայացված 0.54 գրամ հաստատուն չոր քաշով կանեփի բուսական մանրացված զանգվածը հանդիսացել է մարիխուաննա տեսակի թմրամիջոց: Փորձագետի հիշյալ եզրակացությունը եւ թմրամիջոցը պարունակող, կնիքված փաթեթը 2022 թվականի օգոստոսի 08-ին ստացվել է ՀՀ ՔԿ ԵՔՔՎ Արաբկիրի քննչական բաժնում եւ հանձնվել Էդգար Մովսիսյանին:

Էդգար Մովսիսյանը 2022 թվականի օգոստոսի 8-ից մինչեւ 2023 թվականի մայիսի 31-ը ներառյալ ընկած ժամանակահատվածում հափշտակել է ծառայողական լիազորություններն իրականացնելու հանգամանքով պայմանավորված՝ փաստացի իրեն հանձնված 0.54 գրամ հաստատուն չոր քաշով մարիխուաննա տեսակի թմրամիջոցը եւ այն ծխելու եղանակով օգտագործել:

Լյովա Թորոսյանը 2022 թվականի հուլիսի 04-ից մինչեւ 2023 թվականի հունիսի 09-ն ընկած ժամանակահատվածում նախ զբաղեցրել է ՀՀ քննչական կոմիտեի Երեւան քաղաքի քննչական վարչության Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժնի քննիչի պաշտոնակատարի, այնուհետեւ նույն բաժնի քննիչի պաշտոնը եւ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով վերապահված լիազորությունների սահմաններում օժտված է եղել նախաքննություն իրականացնելու իրավասությամբ:

Հունան Բաբայանի՝ գողության վերաբերյալ ներկայացված հաղորդման հիման վրա նախապատրաստված նյութերի շրջանակներում 2022 թվականի հուլիսի 08-ին ՀՀ ոստիկանության ԵՔՎ Արաբկիրի բաժին բերման են ենթարկվել Սուրիկ Հովսեփյանը եւ Գորիկ Քոսփուլյանը:

Նույն օրը ՀՀ ոստիկանության ԵՔՎ Արաբկիրի բաժնում Սուրիկ Հովսեփյանի անձնական խուզարկությամբ, ի թիվս այլնի, հայտնաբերվել է 1 հատ 20.000, 6 հատ 10.000 եւ 2 հատ 1.000 ՀՀ թղթադրամներ, իսկ Գորիկ Քուփալյանի անձնական խուզարկությամբ, ի թիվս այլնի, հայտնաբերվել է 4 հատ 20.000, 2 հատ 1.000, 1 հատ 2.000 ՀՀ թղթադրամներ, 950 ՀՀ մետաղադրամներ եւ ոսկյա շղթա՝ խաչով:

Նախապատրաստված նյութերը 2022 թվականի հուլիսի 08-ին ստացվել են ՀՀ ՔԿ ԵՔՔՎ Արաբկիրի քննչական բաժին եւ իրավասու վերադասի կողմից մակագրվել նույն բաժնի քննիչ Ա. Ջոհրաբյանին:

2022 թվականի հուլիսի 8-ին Ա. Ջոհրաբյանը ՀՀ քրեական օրենսգրքի 255-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով նախաձեռնել է թիվ 14114122 քրեական վարույթը:

2022 թվականի սեպտեմբերի 29-ին հետագա նախաքննությունն իրականացնելու նպատակով հիշյալ քրեական վարույթի նյութերը եւ մեկ փաթեթ իրավասու վերադասի կողմից հանձնվել է Լյովա Թորոսյանին:

Լյովա Թորոսյանը 2022 թվականի սեպտեմբերի 29-ից մինչեւ 2023 թվականի մայիսի 31-ն ներառյալ ժամանակահատվածում հափշտակել է ծառայողական լիազորություններն իրականացնելու հանգամանքով պայմանավորված իր տնօրինմանը եւ տիրապետմանը փաստացի հանձնված 164.000 ՀՀ դրամը եւ 333.000 ՀՀ դրամ արժողությամբ, 20.823 գրամանոց ոսկյա շղթան՝ խաչով, որից 164.000 ՀՀ դրամն օգտագործել է անձնական կարիքների համար, իսկ ոսկյա շղթան՝ խաչով, որպես 291.000 ՀՀ դրամ վարկի ապահովման միջոց գրավադրել է «Ֆասթ Բանկ» ՓԲԸ-ում:

Բացի այդ, Լյովա Թորոսյանը, զբաղեցնելով ՀՀ քննչական կոմիտեի Երեւան քաղաքի քննչական վարչության Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժնի քնիչի պաշտոնակատարի, այնուհետեւ նաեւ նույն բաժնի քնիչի պաշտոնը եւ հանդիսանալով պաշտոնատար անձ, 2023 թվականի մայիսի 17-ից մինչեւ 2023 թվականի մայիսի 31-ը ներառյալ ժամանակահատվածում, ծառայողական լիազորություններն օգտագործելով, հափշտակել է իրեն վստահված խոշոր չափերով՝ 425.000 ՀՀ դրամը եւ 1400 ԱՄՆ դոլարին համարժեք՝ 540,316 ՀՀ դրամը, ընդհանուր՝ 965.316 ՀՀ դրամ:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԿԵՆՏՐՈՆ ՀԱՄԱՅՆՔ

ԾԱՆՈՒՑՈՒՄ Է ՈՒՂԱՐԿԵԼ

«Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ Հակակոռուպցիոն դատարանը ծանուցում է ուղարկել Կենտրոն վարչական շրջանի ղեկավար Սամվել Ղուկասյանին՝ որպես վկա հարցաքննելու համար: Ղուկասյանը դատարան չի ներկայացել, ու դիմումը դատավորը անհարգելի համարեց: Նկատենք, որ վկաներից մեկին դատարանը չի կարողանում գտնել, իսկ մյուսն էլ երկրում չէ:

Հիշեցնենք, որ թաղապետը դատարան պետք է գնար իր ենթակաների՝ պաշտոնեական դիրքի չարաշահման գործով: Իրավապահները կալանավորել են Երեւան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի կոմունալ տնտեսության եւ բազմաբնակարան շենքերի կառավարման մարմինների հետ աշխատանքների կազմակերպման բաժնի պետ Տիգրան Ռաֆիկի Մարտիրոսյանին, նույն բաժնի առաջատար մասնագետ Արման Նվերի Հարությունյանին:

Ըստ նախաքննական մարմնի պաշտոնական տեղեկության՝ վերջիններս նախնական համաձայնությամբ, խմբի կազմում, ունենալով տեղական ինքնակառավարման մարմնի անունից հանդես գալու լիազորություն, ինչպես նաեւ նույն մարմնի անունից իրավունք, պարտականություն կամ պատասխանատվություն առաջացնող գործառույթներ, հանդիսանալով պաշտոնատար անձինք, Երեւան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի՝ հրատապ լուծում պահանջող ընթացիկ աշխատանքներն իրականացնող «Ասֆալտ Քոնսթրաքշն» ՍՊ ընկերության տնօրեն Կամո Գերասիմի Գեւորգյանի նկատմամբ իրենց ծառայողական լիազորությունների իրականացման հետ կապված ընդհանուր բերեհաճ վերաբերմունքի համար 2023 թվականի հուլիսի 11-ին Երեւան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի աշխատակազմի վարչական շենքում Կամո Գեւորգյանից ստացել են խոշոր չափերով՝ 1.000.000 (մեկ միլիոն) ՀՀ դրամ կաշառք-գումար, որը վերջինս անձամբ տվել է Տիգրան Մարտիրոսյանին, որը ստացված կաշառք-գումարից 150.000 դրամը հաջորդ օրը փոխանցել է Արման Հարությունյանին:

Նկատենք, որ նախաքննական մարմինը պատասխանատվության չի կանչել Կենտրոնի թաղապետ Սամվել Ղուկասյանին այն բանի համար, թե ինչպես եղավ, որ նրա ենթակաները, առանց իր իմացության, նման պատժելի քայլի գնացին:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ մարտի 6-ից մարտի 7-ը Հայաստանի Հանրապետության ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումները բացահայտել են հանցագործության 111 դեպք, որոնցից 2-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ԳՈՒՄԱՐՆԵՐ ԿԲՌՆԱԳԱՆՁՎԵՆ

«Յուքոմ» ՓԲԸ-ն գումարի բռնագանձման պահանջով Տավուշի մարզի առաջին ատյանի դատարան քաղաքացիական հայց է ներկայացրել Տավուշի մարզի Ազատամուտ գյուղում հաշվառված « Տավուշ-ՏՎ» ՍՊԸ-ի դեմ: Դատարանի 2023թ. հուլիսի 11-ի որոշմամբ՝ հայցադիմումը վարույթ է ընդունվել: Դատարանը որոշել է գործը քննել պարզեցված վարույթի կարգով: Դատարանի՝ 2023թ. հոկտեմբերի 9-ի որոշմամբ՝ դադարեցվել է պարզեցված վարույթը, եւ որոշվել է քաղաքացիական գործը քննել ընդհանուր հայցային վարույթի կարգով: «Յուքոմ» ՓԲԸ-ն դատարանին հայտնել է, որ այդ ընկերության եւ «Տավուշ-ՏՎ» ՍՊԸ-ի միջեւ 2015թ. հոկտեմբերի 14-ին կնքվել է բաժանորդային պայմանագիր, որով ընկերությունը պարտավորվել է մատուցել կապի ծառայություններ, ինչպես նաեւ մատուցել զանգի անվերապահ վերահասցեավորման ծառայություն: «Տավուշ-ՏՎ» ՍՊԸ-ն իր հերթին պարտավորվել է վճարել մատուցված ծառայությունների դիմաց՝ իր ընտրած սակագնային պլանին համապատասխան: «Յուքոմը» դատարանին հայտնել է, որ «Տավուշ-ՏՎ» ՍՊԸ-ի պարտքը 2023թ. մայիսի 17-ին կազմել է 110 հազար 663 ՀՀ դրամ՝ որպես ծառայության դիմաց չվճարված գումար: «Տավուշ-ՏՎ» ՍՊԸ-ին ուղարկված ծրարը վերադարձվել է դատարան: 2024թ. փետրվարի 23-ին Տավուշի մարզի աաջին ատյանի դատարանի Նոյեմբերյան քաղաքի նստավայրում դատավոր Նարինե Անանյանը վճռել է «Յուքոմ» ՓԲԸ-ի հայցն ընդդեմ «Տավուշ-ՏՎ» ՍՊԸ-ի՝ գումարի բռնագանձման պահանջի մասին, բավարարել, «Տավուշ-ՏՎ» ՍՊԸ-ից հօգուտ «Յուքոմ» ՓԲԸ-ի բռնագանձել 110 հազար 663 ՀՀ դրամ՝ որպես ծառայության դիմաց չվճարված գումար, «Տավուշ-ՏՎ» ՍՊԸ-ից հօգուտ «Յուքոմ» ՓԲԸ-ի բռնագանձել 2 հազար 213.26 դրամ՝ որպես նախապես վճարված պետական տուրքի գումար, եւ 10 հազար ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումար, «Տավուշ-ՏՎ» ՍՊԸ-ից ՀՀ պետական բյուջե բռնագանձել 3 հազար 786. 74 ՀՀ դրամ՝ վճարման ենթակա պետական տուրքի գումարի տարբերությունը: Վճիռն օրինական ուժի մեջ է մտնելու հրապարակման պահից մեկ ամիս հետո եւ նույն ժամկետում կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան: Հավելեմ, որ վերոհիշյալ «Տավուշ-ՏՎ» ՍՊԸ կապ չունի 2020 թվականից ապրիլից ցայսօր Տավուշի մարզում եթերային հեռարձակում իրականացնող «Տավուշ մեդիա» ՍՊԸ-ի հետ, որի տնօրենը «Արտակարգ ալիք» տեղեկատվական ՀԿ-ի եւ «Տավուշ մեդիայի» խորհրդի նախագահ Նիկոլայ Գրիգորյանի որդին է՝ Արմեն Գրիգորյանը:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԱՐՑԱԽ

ԻՆՉՈ՞Ւ ԵՆ ՆԱԽԸՆՏՐՈՒՄ ԱՐՏԱԳԱՂԹԵԼ

2023թ. Արցախի հայաթափումից հետո 100 հազարից ավելի քաղաքացիներ նախնական շրջանում բնակություն են հաստատել ինչպես Հայաստանի տարբեր մարզերում, այնպես էլ Երեւանում: Բռնի տեղահանված արցախցիներին աջակցելու համար Հայաստանի Հանրապետության կառավարությունը մշակել էր 3 սոցիալական աջակցության ծրագրեր՝ առաջնային կարիքների բավարարման համար միանվագ 100 հազար դրամ աջակցություն, կոմունալ ծախսերի եւ ժամանակավոր կացարանների վարձավճարների համար վեցամսյա 40+10 հազար դրամ աջակցություն, սպառողական ծախսերի համար երկամսյա 50 հազար դրամ աջակցություն: Աջակցությունները տրամադրվել են քաղաքացիներին՝ ելնելով որոշակի սահմանափակումներից: Այսինքն՝ այն անձինք, որոնք ունեցել են սեփականություն եւ բանկային քարտում 2 միլիոն եւ ավելի գումարը, ապա նրանց աջակցություն չի տրամադրվել:

ArmLur.am-ին բռնի տեղահանված արցախցիները հայտնում են իրենց դժգոհությունները Կառավարության որոշումներից եւ մշակված ծրագրերի գործընթացից: Բռնի տեղահանված անձինք դժգոհում են, որ աջակցություններից օգտվելու համար դիմում-հայտերի լրացումները բավականին շփոթմունք է առաջացրել շատերի մոտ: Ոմանց չի հաջողվել լրացնել հայտը, ոմանց հաջողվել է լրացնել ու ստանալ պատասխան հայտի լրացման հաստատման մասին, սակայն գումարը ստանալու ժամանակ իմացել են, որ տեխնիկական խնդիրների պատճառով իրենց դիմումը եւս չի ընդունվել, մի մասն էլ անգամ չի իմացել, որ նորից պիտի դիմում լրացնի՝ աջակցության շահառու դառնալու համար: Արցախի քաղաքացիները իրենց դժգոհությունն են հայտնում, որ ստեղծված պայմաններում տրված գումարները շատ քիչ են բնակարանային, կոմունալ եւ ամենօրյա ծախսերը հոգալու համար: Հայտնի է, որ ապրիլի սկզբին կդադարի արդեն բռնի տեղահանված արցախցիներին տրամադրվող 40+10 հազար դրամական աջակցությունը, որից հետո էլ Կառավարությունը որոշակի սահմանափակումներով է սոցիալական աջակցություն տրամադրելու բռնի տեղահանված արցախցիներին: Ըստ նախնական որոշման՝ 50 հազար դրամական աջակցություն տրամադրելու է միայն անչափահասներին, եւ 20 հազար դրամ՝ թոշակառու անձանց: Բնակարան տրամադրելու հարցն էլ Կառավարությունը որոշել է լուծել՝ ամեն մի շնչի համար տրամադրելով 3 միլիոն ՀՀ դրամ, եւ այն էլ՝ ետվերադարձով: Այսինքն՝ պետության կողմից քաղաքացուն կտրամադրվի 3 միլիոն դրամ, որը նա պետությանը պիտի վերադարձնի 10 տարի անց՝ տվյալ բնակարանի համար սեփականության իրավունք ստանալու համար: Ընդ որում՝ Արցախի քաղաքացիները ծրագրից կարող են օգտվել միայն ՀՀ քաղաքացիություն ստանալուց հետո: Կառավարության այս որոշմանը հակադարձել են Արցախի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորները: Նրանք առաջարկել են յուրաքանչյուր քաղաքացու տրամադրել 5 միլիոն դրամ եւ անվերադարձ: Թե ինչքանով կընդառաջեն ԱՀ ԱԺ պատգամավորների առաջարկին, դեռ անդրադարձ չկա: ArmLur.am-ին Արցախի քաղաքացիները հայտնում են նաեւ այն մասին, որ քաղաքացիների շրջանակներում Հայաստանից արտագաղթելու հիմնական պատճառը նշվում է սոցիալական խնդիրներին առնչվելը, աշխատանքի բացակայությունը, բնակվարձերի բարձր լինելը եւ այն վտանգը, որ նորից կառուցածը Հայաստանում սպասվող հնարավոր պատերազմի պատճառով չեն կորցնի:

Հավելում. սոցիալական աջակցություն տրամադրած անձանց ընդհանուր պատկերը 2024թ. փետրվարի դրությամբ հետեւյալն է. 100 հազար դրամ աջակցության ծրագրի շրջանակում՝ 112 765 անձ, որից 80 535՝ չափահաս, 32 230՝ անչափահաս, 40+10 հազար հոկտեմբեր ամսվա համար՝ 107 942 անձ, 40+10 հազար ծրագրի շրջանակում նոյեմբեր ամսվա համար՝ 83 971 անձ, 40+10 հազար ծրագրի շրջանակում դեկտեմբեր ամսվա համար՝ 90 069 անձ, 40+10 հազար ծրագրի շրջանակում հունվար ամսվա համար՝ 95 742 անձ, 50 հազար ծրագրի շրջանակում նոյեմբեր ամսվա համար՝ 77 409 անձ, 50 հազար ծրագրի շրջանակում դեկտեմբեր ամսվա համար՝ 83 601 անձ:

ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱԿԱՐԳԸ ՆՈՐՄԱԼ ԱՇԽԱՏՈՒՄ Է

Էլեկտրոնային դեղատոմսերի համակարգը նորմալ աշխատում է, բայց ցանկացած նոր ինստիտուտի ներդրման պարագայում շահառուների շրջանում լինում է տեղեկատվության պակաս եւ որոշակի բարդություններ օգտվելիս.

Լրագրողների հետ ճեպազրույցում այս մասին ասաց առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանը՝ արձագանքելով այն դիտարկմանը, թե նոր համակարգի ներդրումը բազմաթիվ բողոքներ է առաջացրել քաղաքացիների ու դեղատների աշխատակիցների շրջանում:

«Էլեկտրոնային դեղատոմսերի համակարգը նորմալ աշխատում է, բայց, իհարկե, հասկանում ենք, որ ցանկացած նոր ինստիտուտի ներդրման պարագայում լինում է տեղեկատվության պակաս եւ որոշակի բարդություններ օգտվելիս: Մենք ամենօրյա ռեժիմով հավաքագրում ենք բոլոր խնդիրներն ու բողոքները. եթե խնդիրներ կան, դրանց արագ լուծում են տրվում, ինչպես նաեւ ամփոփվում են ամենաշատ տրվող հարցերը, եւ օրական ռեժիմով մենք պատասխանում ենք դրանց:

Այս օրերի ընթացքում մոտ 40 հազար դեղատոմս է դուրս գրվել: Այս թիվը խոսում է այն մասին, որ համակարգը նորմալ աշխատում է: Ես նաեւ հայցում եմ մեր քաղաքացիների ներողամտությունը՝ հասկանալով, որ ցանկացած էլեկտրոնային եւ նման մեծ թվով անձանց վերաբերելի բարեփոխումների ընթացքում առաջին օրերին լինում են բարդություններ, բայց հասկանում ենք, որ այս բարեփոխումները նպաստում են հենց առաջին հերթին մեր քաղաքացիների առողջության պահպանմանը եւ համակարգի թափանցիկությանը»,-ասաց Ավանեսյանը:

Նա վստահեցրեց, որ նշված քայլերն են, որ պիտի նպաստեն հետագայում ավելի հեշտ օգտագործելի էլեկտրոնային հարթակների հասանելիությանը:

● *Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 14 պատահար. 2 մարդ զոհվել է, 17-ը՝ ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ԱՆՑՈՒԴԱՐՁ

YouTube Kids ՉԿԱ

Վերջին շրջանում, տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանը զուգընթաց, մի շարք խափանումներ են տեղի ունենում սոցկայքերում եւ իրնտերնետ պրովայդերներում:

Նման խնդիրներին զուգահեռ համացանցի օգտագործման առումով ազատականացված Հայաստանը մի շարք ծրագրերի հասանելիություն չունի, օրինակ՝ ArmLur.am-ը նկատեց, որ Youtube-ի մանկական հավելվածը Հայաստանում չի գործում:

Սկզբում փորձեցինք համացանցից տեղեկանալ, թե որն է նման արգելքի պատճառը: Խելացի որոնման արդյունքում հասկացանք, որ Youtube-ը ունի համակարգ, որով մոնիթորինգի արդյունքում որոշում է, թե որ երկրում կա մանկական բովանդակության մեծ պահանջարկ, ըստ դրա՝ թույլատրում է ծրագրի հասանելիություն:

Չբավարարվելով այս պատասխանից՝ հարցումով դիմեցինք Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն՝ հայաստանյան կողմին լսելու համար, եւ նախարարությունից ստացանք հետեւյալ պատասխանը. «Տեղեկացնում ենք, որ ներկայում աշխատանքներ են տարվում Youtube-ի հետ եւ բարձրացված հարցը քննարկումների օրակարգում է»:

YouTube Kids-ի վերջին թարմացումները եղել են 2022 թվականին, դրանից հետո այն հասանելի է Եվրոպայի ամբողջ տարածքում, Աֆրիկա մայրցամաքի մի շարք երկրներում, նույնիսկ պատժամիջոցների տակ գտնվող Ռուսաստանի Դաշնությունում, բայց ոչ Հայաստանում:

Ստացվում է, որ 2 տարի գործող համակարգը Հայաստանում հասանելի դարձնելը խնդիր է, բայց Կառավարությունը չի դադարում հարկերից ազատել SS ոլորտի խոշոր գումարներ շրջանառող ընկերություններին:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ԱԲՍՈՒՐԴ ԳՆԵՐ ԵՆ

Առջեւում գարնանային ամենագեղեցիկ տոնն է՝ Մարտի 8-ը: Ամեն տարի կանանց տոնից առաջ ծաղկի գները կտրուկ թանկանում են:

Այս տարին եւս բացառություն չէ. Մարտի 8-ին ընդառաջ ծաղկի գները եռակի անգամ թանկացել են: Խանութներում մեկ կակաչի գինը միջինում 700 դրամ է, իսկ վարդինը՝ 1000:

ArmLur.am-ը շրջել է Երեւանի Կենտրոնում եւ Արգավանդում գտնվող ծաղկի խանութներով՝ հասնակալու, թե ինչ վիճակ է այնտեղ:

Ծաղկավաճառները պատմում են՝ ծաղկի մեծածախ շուկայում աբսուրդ գներ են, վարդի գինը հասնում է ընդհուպ մինչեւ 20.000 դրամի, բայց ոչ մի դրամ չեն էժանացնում:

Չեն բացառում, որ Մարտի 8-ին էլի թանկանա: Ծաղկի բիզնեսով զբաղվողները ահազանգում են՝ ծաղկի առցանց խանութները հարվածում են իրենց բիզնեսին:

Խնդիրն այն է, որ առցանց խանութները հարկ չեն վճարում, ինչի արդյունքում ծաղկի գներն ավելի մատճելի են, իսկ քաղաքացիները, բնականաբար, այս դեպքում գերադասում են պատվիրել առցանց խանութներից:

ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆ

ԲՈՒՀԵՐԻ ՕՊՏԻՄԱԼԱՑՈՒՄ

ԿԼԻՆԵՆ ԲՈՒՀԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ 5 ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ArmLur.am-ին հայտնի են դարձել այն 5 ուղղությունների ամբողջական ցանկը, որի շրջանակներում իրականացվելու է բուհերի օպտիմալացման եւ կամ խոշորացման ծրագիրը: Հայաստանում կլինեն բուհական կրթության 5 ուղղություններ՝ հետեւյալ բաշխումով.

Արվեստների ուղղության մեջ են մտնում

1 Երեւանի թատրոնի եւ կինոյի պետական ինստիտուտը,
2 Երեւանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիան,
3 Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիան,
4 ՀՀ ԳԱԱ Հնագիտության եւ ազգագրության ինստիտուտը
5 ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտը,
6 Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոնը

Հայաստանն ունենալու է մեկ Կրթական բուհ, որի մեջ կմտնեն

1 Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանը,
2 Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի պետական ինստիտուտը,
3 Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանը,

Բժշկական ուղղությունը կմիավորի 3 կառույցների

1 ՀՀ ԳԱԱ Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտը,
2 Երեւանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանը,
3 ՀՀ ԳԱԱ Լ.Ա. Օրբելու անվան ֆիզիոլոգիայի ինստիտուտը

Դասական ուղղության մեջ կմիավորվեն

1 Ա. Թախտաջյանի անվան բուսաբանության ինստիտուտը,
2 Երեւանի պետական համալսարանը,
3 Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանը,
4 ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտը,
5 ՀՀ ԳԱԱ Արեւելագիտության ինստիտուտը,
6 ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնը,
7 ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտը,
8 ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտը,
9 ՀՀ ԳԱԱ Մաթեմատիկայի ինստիտուտը,
10 ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի եւ իրավունքի ինստիտուտը,
11 ՀՀ պետական կառավարման ակադեմիան

Ամենաներառականը թերեւս Տեխնոլոգիական ուղղությունն է: Այստեղ կմիավորվեն

1 Հայաստանի ազգային ագրարային համալսարանը,
2 Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանը,
3 ՀՀ ԳԱԱ Ա.Նալբանդյանի անվան քիմիական ֆիզիկայի ինստիտուտը,
4 ՀՀ ԳԱԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտը,
5 ՀՀ ԳԱԱ Հայկենսատեխնոլոգիա ԳԱԿ-ը,
6 ՀՀ ԳԱԱ Մ. Մանվելյանի անվան ընդհանուր եւ անօրգանական քիմիայի ինստիտուտը,
7 ՀՀ ԳԱԱ Ռադիոֆիզիկայի եւ էլեկտրոնիկայի ինստիտուտը,
8 ՀՀ ԳԱԱ Օրգանական եւ դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոնը,
9 ՀՀ ԳԱԱ Ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտը,
10 ՀՀ ԳԱԱ Ֆիզիկայի կիրառական պրոբլեմների ինստիտուտը,
11 ՀՀ ԳԱԱ Էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոնը,
12 ՀՀ ԳԱԱ Ինֆորմատիկայի եւ ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտը,
13 ՀՀ ԳԱԱ Կենդանաբանության եւ հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնը,
14 ՀՀ ԳԱԱ Հ. Բունիաթյանի անվան կենսաքիմիայի ինստիտուտը,
15 ՀՀ ԳԱԱ Փորձաքննությունների ազգային բյուրոն,
16 ՀՀ ԷՆ Երկրագործության գիտական կենտրոնը,
17 ՀՀ ԷՆ Բանջարաբոստանային եւ տեխնիկական մշակաբույսերի գիտական կենտրոնը,
18 Ճարտարապետության եւ շինարարության Հայաստանի Ազգային համալսարանը,
19 Սենդամթերքի անվտանգության ոլորտի ռիսկերի գնահատման եւ վերլուծության գիտական կենտրոնը,
20 «ՔԵՆԴԼ» սինքրոտրոնային հետազոտությունների ինստիտուտը,
21 «Գիտուժ» նախաձեռնությունը (հավանաբար),
22 Հայաստանի գիտության եւ տեխնոլոգիաների հիմնադրամը (FAST) (հավանաբար):

Երկու կառույցի հարցում ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի հարցերի նախարար Ժաննա Անդրեասյանը չի կողմնորոշվել: Դեռ հայտնի չէ՝ Տեխնոլոգիական, թե Դասական ուղղության մեջ կմտնեն

ՀՀ Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիան եւ ՀՀ ԳԱԱ Մեխանիկայի ինստիտուտը:

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԴԵՂԱՏՈՄՍ

ԱՆՀԱՐՄԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՆ ՍՏԵՂԾՈՒՄ

Փետրվարի 28-ին ՀՀ առողջապահության փոխնախարար Արսակ Ջումարյանը ասուլիսի ժամանակ հայտարարեց, որ Հայաստանի Հանրապետությունում մարտի 1-ից մի շարք դեղեր (հակաբակտերիային, հակասնկային, հակամիկոբակտերիային, հակավիրուսային դեղերի, իմունային շիճուկների եւ իմունոգլոբուլինների, պատվաստանյութերի) հնարավոր չի լինի ձեռք բերել առանց էլեկտրոնային դեղատոմսի:

Այս որոշումը մեծ արձագանք ստացավ, շատ մասնագետներ իրենց դժգոհությունները հայտնեցին:

ArmLur.am-ի հետ զրույցում բժիշկ Վահե Տեր-Մինասյանը նույնպես հայտնեց իր դժգոհությունը այս նոր որոշման մասին:

«Շատ անհարմարություններ են ստեղծում, շատ բարդ է: Գաղափարը ճիշտ գաղափար է, գաղափարը այնպես է, որ պետք է գնաս դրան, եւ պետք է վերահսկելի լինի: Ես՝ որպես պրակտիկ բժիշկ, ինձ համար դիսկոմֆորտ է, շատ ժամանակ է խլում, պացիենտը գանգատվում է՝ դեղատուն գնալու համար պետք է փաստաթուղթ ունենաս, ինձ թվում է՝ տեխնիկական կատարումը մեզ մոտ էդքան հաջող չի»,-ասաց Վահե Տեր-Մինասյանը:

Բժշկի խոսքով՝ շատ-շատ ժամանակ է խլում, շատ մանրամասն թղթեր պետք է լրացնել:

«Եթե հնարավոր լինի գաղափարը վերահսկել, գաղափարը լավն է, եթե հնարավոր լինի վերահսկել եւ մեզ համար այդքան անհարմարություններ չստեղծել, շատ ավելի լավ կլինի»,-հավելում է Վահե Տեր-Մինասյանը:

ԷՄՄԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՏԻԳՐԱՆ ՄԱՆՍՈՒՐՅԱՆ

ՀՈՂԱԹԱՓԵՐՈՎ ԳՈՐԾԻՔԻՆ ՉԻ ՄՈՏԵՆՈՒՄ

«Երաժշտության մեջ երկու երեւույթների հարաբերություն կա՝ ձայնի եւ լռության: Ո՞րն է ավելի հարուստ, ո՞րն է ավելի հագեցած, որի՞ մեջ առավել մեծ խորհուրդ կա: Այն կարծիքին եմ, որ հարուստը լռությունն է». Բեյրութում ծնված Տիգրան Մանսուրյանի ընտանիքը հայրենադարձվում է, երբ աղագա կոմպոզիտորը դեռեւս 7 տարեկան է լինում, եւ լիբանանյան տաք կյանքից հետո հայտնվում ցուրտ Արթիկում ծայրահեղ աղքատության մեջ: Մի առիթով Մանսուրյանը նշել է. «1948 թվականի հունվարի 1-ից դարձա մուրացկան եւ մի տողրակ ուսիցս կախած՝ մայրիկիս վերարկուով եւ մասիկներով շրջում էի տնից տուն՝ հաց հավաքելու. այդ արհավիրքից պետք էր փրկվել»:

Առաջին աշխատանքը, որի միջոցով Մանսուրյանը կարողացել է գումար վաստակել, լուսանկարչությունն էր: Լուսանկարիչ հայրը հաճախ էր հիվանդանում, եւ Մանսուրյանը նրա փոխարեն աշխատում էր: Այդ տարիներին մաեստրոյին տպավորել է այն, որ իրենից մեծ մարդիկ իրեն շատ լուրջ են վերաբերվել աշխատանքում:

Երաժշտության հանդեպ սերը դեռեւս մանկուց է եղել: Մայրը, ով մեծացել է Հալեպի որբանոցում, չափահաս դառնալուց հետո աշխատանքի է անցել եւ իր առաջին աշխատավարձով ռադիո հաղորդիչ գնել, իսկ հայրը հրաշալի ձայն է ունեցել եւ տանը հաճախ է երգել: Ծնողները ջարդից հետո հայտնվել են Հալեպի որբանոցում, որտեղ էլ ծանոթացել են, ամուսնացել եւ տեղափոխվել Լիբանան: Նույն ընտանիքում է ծնվել նաեւ սոպրանու, օպերային երգչուհի Արաքսիա Մանսուրյանը, որն այսօր դասավանդում է Սիդնեյի կոնսերվատորիայում՝ օտարազգիներին ծանոթացնելով հայկական երգարվեստի հետ:

Մանսուրյանն առաջին անգամ դաշնամուրի դիմաց նստում է 13 տարեկանում, երբ մայրն ուղարկում է Արթիկի ակումբից հորը կանչելու: Այդ ժամանակ դեռեւս մեծ երազանքներ ունեցող պատանին առաջին անգամ հորը նվագելիս է տեսնում եւ փոխարինում նրան դաշնամուրի առջեւ առ այսօր:

1956 թվականին Մանսուրյանը սեփական ուժերով ընդունվում է Ռոմանոս Մելիքյանի անվան երաժշտական ուսումնարան՝ Էդուարդ Բաղդասարյանի դասարան:

«Իսկական կոմպոզիտորը նա է, ով չի կարող չգրել». առաջին հանդիպմանը Էդուարդ Բաղդասարյանի ասած խոսքերը խորը հետք են թողնում 17-ամյա երիտասարդի հոգում եւ դառնում նրա ուղենիշը: Այդ ընթացքում Մանսուրյանը աշխատում էր շինարարությունում, որպեսզի կարողանա հոգալ իր կարիքները:

Ստեղծագործում էր գիշերները ուսումնարանի դաշնամուրների դիմաց, իսկ իր առաջին դաշնամուրը գնում է արդեն 1969 թվականին «Մենք ենք մեր սարերը» ֆիլմի համար ստացած իր հոնորարով, եւ այն առ այսօր իր տանն է:

21 տարեկանում ապագա հանճարն ամուսնանում է իր դասընկերուհու՝ շուշեցի ճարտարապետի դստեր՝ Նորա Ահարոնյանի հետեւ ունենում մեկ որդի եւ մեկ դուստր, որոնք խիստ կազմակերպված մանկություն են ունեցել, քանի որ կինն անում էր ամեն բան, որ նա կարողանա հանգիստ ստեղծագործել: Մանսուրյանը բազմիցս նշել է, որ կինն իր լավագույն ընկերն է եղել. «Նա Աստծո ամենամեծ նվերն էր, որ ես ունեցել եմ իմ ամբողջ կյանքում. երաժշտությանը զուգահեռ»:

Ստեղծագործական առաջին տարիներից առ այսօր Մանսուրյանն իր առավոտները սկսում է դաշնամուրի դիմաց՝ չխախտելով գործիքի դիմաց կոշիկներով նստելու իր սկզբունքը. նա հողաթափերով երբեք գործիքին չի մոտենում:

Երաժշտությունը մաեստրո Մանսուրյանի համար գործ չէ, այն ինքնարտահայտման միջոց է, ապրելու լավագույն ընթացքը:

Հայտնի են հատկապես «Հայֆիլմ» կինոստուդիայի համար գրված ստեղծագործությունները, որոնք, սակայն, մաեստրոյի կարծիքով, իրեն ետ են պահել բուն ստեղծագործական կյանքից: Հենց այդ պատճառով էլ 1980-ականների սկզբին դադարեցրել է համագործակցությունը:

Ֆիլմերի համար երաժշտություն գրելիս հաճույքով է աշխատել այն ռեժիսորների հետ, որոնք իրենց միտքը չեն պարտադրել, եւ սցենարը կարդալուն պես դաշնամուրին է հանձնել իր առաջին զգացողությունները:

Մանսուրյանն է հեղինակել Հրանտ Մաթեւոսյանի գրական հիմքի վրա նկարահանված ֆիլմերի երաժշտությունները, ինչպիսիք են «Աշնան արեւը», «Մենք ենք մեր սարերը», «Տերը»:

ՀՈՒՐԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՄԱՐԶԱԿԱՆ

ՍԱՀՄԱՆԵԼ Է ՌԵԿՈՐԴՆԵՐ

Անգլիական «Մանչեսթեր Սիթին», Չեմպիոնների լիգայի 1/8 եզրափակչի պատասխան խաղում 3-1 հաշվով հաղթելով դանիական «Կոպենհագենին», սահմանել է ռեկորդներ. հաղորդում է Opta-ն:

Չեմպիոնների լիգայի գործող գավաթակիրն առաջին անգլիական ակումբն է, որը 10 անընդմեջ հաղթանակ է տանում գլխավոր եվրագավաթում:

Նաեւ «Մանչեսթեր Սիթին» պատմության մեջ առաջին թիմն է, որը 3 եւ ավելի գոլ է խփում Չեմպիոնների լիգայի 8 խաղում անընդմեջ:

«Մանչեսթեր Սիթին» նաեւ Չեմպիոնների լիգայի պատմության մեջ երկրորդ թիմն է, որն այս մրցաշարում 30 եւ ավելի անընդմեջ տնային հանդիպում է անցկացրել առանց պարտության: 2013-2020թթ. նման շարք ունեցել էր միայն կատալոնական «Բարսելոնան» (38 խաղ):

«Էթիհադ» ստադիոնում անցկացրած նախորդ 30 խաղում Խոսեպ Գվարդիոլայի թիմը տարել է 28 հաղթանակ ու գրանցել 2 ոչ-ոքի:

ՊԱՅՔԱՐՈՒՄ ԵՆ

Հայաստանի բռնցքամարտի հավաքականի անդամները շարունակում են պայքարը Փարիզի օլիմպիական խաղերի վարկանիշային մրցաշարում:

Մարտի 7-ին ռինգ դուրս եկան Հայաստանի երկու ներկայացուցիչ՝ Նարեկ Մանասյանը եւ Գուրգեն Մադոյանը:

Նախօրեին կայացած մենամարտերում աշխարհի առաջնության փոխչեմպիոն Դավիթ Չալոյանը հենց մեկնարկում պարտություն էր կրել Կանադան ներկայացնող Ալեքսիս Բարիերից, իսկ Ռուդոլֆ Գարբոյանը 5:0 հաշվով հաղթել էր Սինգապուրի ներկայացուցիչ Խուան Տեո Վիին:

Ավելի վաղ ռինգ էին դուրս եկել 57 կգ քաշային Արթուր Բազեյանն ու 80 կգ քաշային Ռաֆայել Հովհաննիսյանը: Երկու բռնցքամարտիկներն էլ գրագետ մենամարտ են անցկացրել ու 5:0 հաշվով հաղթել իրենց մրցակիցներին: Բազեյանն առավելության էր հասել Շվեյցարացի Սեյֆեդին Լետայիֆի նկատմամբ:

ՍՈՒՊԵՐԳԱՎԱԹԱԿԻՐԸ

Հայաստանի բասկետբոլի 2023/24 մրցաշրջանի Սուպերգավաթակիրը «Էրեբունի»-ն է:

Սուպերգավաթի համար մրցեցին Երեւանի երկու թիմերը՝ «Ուրարտու»-ն եւ «Էրեբունի»-ն:

Մեկնարկային քառորդում «Էրեբունի»-ն առավելություն ստացավ՝ 18:23, որը պահպանեց նաեւ երկրորդ կեսում: Թիմերը մեծ ընդմիջման գնացին 38:47 հաշվով՝ հօգուտ «Էրեբունու»:

Հաջորդ երկու քառորդներում «Ուրարտու»-ին այդպես էլ չհաջողվեց հետ բերել կորցրածը, եւ «Էրեբունի»-ն, հաղթելով 99:84 հաշվով, դարձավ այս մրցաշրջանի Սուպերգավաթակիր:

ԹԱՏՐՈՆ

ԴԱՏԱՐԱՆՆԵՐՈՎ ԹՐԵՎ Է ԳԱԼԻՍ

ArmLur.am-ը հայտնել էր, որ «Արմեն Մազմանյանի անվան բեմարվեստի ազգային փորձարարական «Գոյ» կենտրոն» պետական ոչ առեւտրային կազմակերպությունը վերակազմավորման ձեւով միացվեց «Գ. Մունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոն» պետական ոչ առեւտրային կազմակերպությանը, ինչից հետո «Գոյ» թատրոնի դերասանական անձնակազմը կազմակերպել էր բողոքի ակցիա ԿԳՄՄՆ-ի դիմաց:

Հիշեցնենք, որ այս ամենից հետո դադարեցվել էին «Գոյ» թատրոնի՝ փետրվար ամսվա ներկայացումները:

Պարզելու համար, թե ինչ փուլում է գտնվում թատրոնի հետագա ճակատագիրը, ArmLur.am-ը կապ հաստատեց «Գոյ» թատրոնի գեղարվեստական ղեկավար Արթուր Սահակյանի հետ:

«Հիմա իրենք խախտումներով մեզ հանել են պետական ռեգիստրից, մենք թատրոնի հաշվից զրկվել ենք եւ չենք կարողանում տոմս վաճառել, դրա համար արդեն մոտավորապես մեկ ամիս ներկայացումներ չունենք. փոտրվարի 11-ից ներկայացումներ չունենք»,- ասաց գեղարվեստական ղեկավարը:

Սահակյանի խոսքով՝ դատական հայցերը ավելանում են, եւ թատրոնը անարդարությունը դադարեցնելու համար դատարաններով թրեւ է գալիս:

«Բայց դատական հայցերը ավելանում են, մասնավորապես՝ պետռեգիստրը եւ մենք հիմա անցել ենք մեզ համար ամենասարսափելի աշխատանքին, մենք դատարաններով ենք թրեւ գալիս, դատական գործերի ենք ներկա գտնվում, որպեսզի այս անարդարությունը դադարեցնենք «Գոյ» թատրոնի վերաբերյալ՝ մասնավորապես եւ առհասարակ»,- ասաց Արթուր Սահակյանը:

ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆ

●Ապրիլի 18-ին «Առնո Բաբաջանյան» համերգասրահում տեղի կունենա «Մանուշակ Շիրինյան. «Պոեզիայի արահետներով»» գրական երեկոն: Տոմսերի արժեքը՝3000-7000 դրամ: Սկիզբը՝ժամը 19:00-ին:

ԵՂԵ՛Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ՄԱՐԻԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆԻ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Խնդրում եմ ասել՝ ինչպես է հաշվարկվում աշխատանքային ստաժը: Ուզում եմ ծանոթանալ հաշվարկման կարգին:

Ամալյա Մխոյան (46 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Ա. Մխոյանի հարցին ի պատասխան՝ տեղեկացնում ենք, որ աշխատանքային ստաժում հաշվարկվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի ընդունելուց մինչեւ ազատելու օրն ընկած ժամանակահատվածները, այլ գործունեության ժամանակահատվածները, ինչպես նաեւ զինվորական ծառայության ժամանակահատվածները: Ստաժում հաշվարկվում են յուրաքանչյուր ժամանակահատվածի տարին, ամիսը, օրը, այնուհետեւ գումարվում, ընդ որում՝ յուրաքանչյուր 30 օրը հաշվառվում է որպես մեկ լրիվ ամիս, իսկ յուրաքանչյուր 12 ամիսը՝ մեկ լրիվ տարի: Կենսաթոշակի չափը հաշվարկելիս (վերահաշվարկելիս) աշխատանքային ստաժի հանրագումարի մեջ (տարի, ամիս, օր) մինչեւ 6 ամսվա (180 օրվա) ժամանակահատվածը չի հաշվառվում, իսկ 6 ամսվանից ավելի ժամանակահատվածը հաշվառվում է որպես մեկ տարվա ստաժ:

ՀՀ աշխատանքի եւ
սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Տարիքային աշխատանքային կենսաթոշակ նշանակելու համար՝ անհրաժեշտ առնվազն 10 օրացուցային տարվա աշխատանքային ստաժի առկայության դեպքում, իսկ հաշմանդամության կենսաթոշակ նշանակելիս օրենքի 12-րդ հոդվածով սահմանված աշխատանքային ստաժի առկայության դեպքում աշխատանքային ստաժում հաշվառվում է նաեւ ծնողներից մեկի՝ հաշմանդամ երեխային մինչեւ նրա 18 տարին լրանալը, կամ խնամակալ ճանաչված անձի առաջին խմբի հաշմանդամին խնամելու ժամանակահատվածը՝ տասը տարուց ոչ ավելի:

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Մի շարք բանկերի հետ կնքել եմ ավանդային պայմանագրեր: Արդյոք պետությունը, բանկը կամ այլ կազմակերպություն երաշխավորո՞ւմ է դրանք:

Հրանտ Մարտիրոսյան (39 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո՛, Ձեր ավանդները երաշխավորվում են Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի կողմից, ընդ որում՝ երեշխավորված է թե՛ ավանդի մայր գումարը, թե՛ դրա նկատմամբ հաշվարկվող տոկոսը:

«Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով երաշխավորված ավանդի (մայր գումար եւ հաշվարկված տոկոս) չափերն են՝

ա) եթե ավանդատուն անվճարունակ բանկում ունի միայն դրամային բանկային ավանդ, ապա երաշխավորված ավանդի չափը տասը միլիոն հայկական դրամ է,

բ) եթե ավանդատուն անվճարունակ բանկում ունի միայն արտարժութային բանկային ավանդ, ապա երաշխավորված ավանդի չափը հինգ միլիոն հայկական դրամ է:

Եթե ավանդատուն ունի ավանդներ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող մի քանի բանկերում, ապա նրա ավանդները երաշխավորվում են յուրաքանչյուր բանկում առանձին:

Ֆինանսական համակարգի հաշտարար

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Հաճախորդն իրավունք ունի իր հաշվում առկա դրամական միջոցները տնօրինել իր հայեցողությամբ՝ բանկին հաշվից դրամական միջոցներ դուրս գրելու կարգադրություն տալով:

ԼՈՒՌ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից



Մարսելում մարտի 15-ին կբացվի Սողոմոն Թեհլերյանի հուշարձանը:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

	Շիրակ	-3 -7 / +4 +9
	Կոտայքի լեռներ	-8 -12 / +5 +8
	Կոտայքի նախալեռներ	-5 -8 / +8 +10
	Գեղարքունիք	-8 -13 / +3 +6
	Լոռի	-6 -10 / +8 +10
	Տավուշ	-4 -7 / +8 +11
	Արագածոտնի լեռներ	-8 -12 / +3 +6
	Արագածոտնի նախալեռներ	-5 -7 / +8 +11

	Արարատ	-4 -7 / +11 +13
	Արմավիր	-4 -8 / +10 +13
	Վայոց ձորի լեռներ	-3 -7 / +3 +6
	Վայոց ձորի նախալեռներ	-3 -7 / +10 +12
	Սյունիքի հովիտներ	-4 -7 / +11 +14
	Սյունիքի նախալեռներ	-9 -13 / +7 +10
	ԼՂՀ	-9 -10 / +7 +9
	Երեւան	2 - 4 / +9 +11

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ ______________

Ազգանուն՝ ______________

Առաքման հասցե՝ ______________

Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ ______________

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **7.3.2024**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*